ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 135-Ա

ԳՈՀԱՐ ՎԱՐԴԳԵՍԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ « ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի՝ «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» N 02-Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետը, «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 16-ի N 3 որոշումը,ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրված նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիրը (Սերիա Ա N0755, տրված՝ 21.05.2024 թ.) և մրցույթում հաղթող ճանաչված Գոհար Վարդգեսի Հակոբյանի դիմումը.

1. Սույն թվականի մայիսի 21--ից Գոհար Վարդգեսի Հակոբյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Արենիի համայնքի Աղավնաձոր բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում՝ լուծելով 17 մարտի 2021 թվականի թիվ 01 որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. Գոհար Վարդգեսի Հակոբյանին հետ կնքել աշխատանքային պայմանագիր 5 (հինգ) տարի ժամկետով, գործող հավաստագրի ժամկետի երկարաձգման պայմանով:

3.Սույն որոշման 2-րդ կետով սահմանված հավաստագրի ժամկետը չերկարաձգելու դեպքում կնքված աշխատանքային պայմանագիրը կգործի մինչև 21.05.2029 թվականը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**